


Հաստատված է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ  
բաժնետերերի 30.06.2015թ. տարեկան ընդհանուր  
ժողովի կողմից:

Ժողովի նախագահ Ա. Կալֆաջյան «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր  
տնօրեն՝ Ա. Կալֆաջյան



«ԱՐՄԵՆԲՐՈԿ»

Բաց բաժնետիրական ընկերության

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՄՆ-Ի  
ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻ  
ԵՎ ՎՃԱՐՈՒՄ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ  
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ

## 1. Ներածական մաս

1.1. Սույն կանոնները սահմանում են «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ՕՀՀՀՕ-ի նպատակներով իր հաշվետերերին և իրենից վճարում ստացողներին նույնականացնելու պայմաններն ու ընթացակարգը:

1.2. Սույն կանոններում վճարում ստացողներին վերաբերող դրույթները նույնությամբ վերաբերում են նաև հաշվետերերին և հակառակը:

1.3. Սույն կանոններում կիրառվող հետևյալ հասկացություններն ունեն ստորև բերված նշանակությունները

1.3.1. **ԳՄՆԸ** – ՆԵԾ-ի կողմից տրվող գլոբալ միջնորդի նույնականացնող համար,

1.3.2. **Ենթադրության կանոններ** – ՕՀՀՀՕ-ի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոններ, որոնք, համապատասխան փաստաթղթային հիմնավորումների բացակայության ժամանակ կիրառվում են անձանց կարգավիճակի որոշման համար,

1.3.3. **ՆԵԾ** – ԱՄՆ-ի ներքին եկամուտների ծառայություն,

1.3.4. **ՌՖՕԿ** – ոչ ֆինանսական կազմակերպություն, որը ԱՄՆ տեսանկյունից համարվում է օտարերկրյա կազմակերպություն,

1.3.5. **ՓԼԱՖ կանխարգելման գործընթաց** – Գործընթաց, որը ներդրված է Ընկերությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման նպատակով,

1.3.6. **ՕՀՀՀՕ** - ԱՄՆ-ի՝ օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության օրենք,

1.3.7. **ՕՀՀՀՕ կարգավիճակ** – անձի կարգավիճակը ՕՀՀՀՕ-ի տեսանկյունից,

1.3.8. **ՕՖՀ** - ֆինանսական հաստատություն, որը ԱՄՆ տեսանկյունից համարվում է օտարերկրյա կազմակերպություն:

1.4. Սույն կանոններում կիրառվող այլ հասկացությունները կիրառվում են ՕՀՀՀՕ-ում և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում սահմանված իմաստներով:

1.5. ՕՀՀՀՕ-ի նպատակներով հաշվետերերին և վճարում ստացողներին նույնականացնելու հետ կապված և սույն կանոններով չկարգավորվող հարցերը կարգավորվում են ՕՀՀՀՕ-ով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով:

## 2. կարգավիճակի որոշման ընդհանուր կանոնները

2.1. Ընկերությունը պետք է վճարումը ստացողի կարգավիճակը որոշելիս հիմնվի այնպիսի փաստաթղթերի վրա, որոնք ընկերությունը կարող է վստահորեն կապակցել վճարման հետ: Եթե Ընկերությունը վճարումը է կատարում այնպիսի անձի, որը վերջնական վճարումը ստացողը չէ, ապա Ընկերությունը պետք է նույնացնի վճարման շղթայի բոլոր օղակներին:

2.2. Ընկերությունը պետք է վճարումը ստացող անձին վերաբերվի որպես միջնորդ, եթե այդ անձը ներկայացրել է պահման հավաստագիր կամ գրավոր տեղեկացում, այն մասին, որ

վճարումը ընդունում է այլ անձի կամ անձանց անունից: Եթե վճարումը ստացողը ՕՖՀ է, որը վճարումների մի մասը ստանում է որպես շահառու, իսկ մյուս մասը՝ որպես միջնորդ, ապա Ընկերությունը կարող է պահանջել, որ այդ ՕՖՀ-ն ներկայացնի երկու պահման հավաստագիր՝ շահառուի հավաստագիր այն գումարների համար, որոնք այն ստանում է որպես շահառու և միջնորդի հավաստագիր այն գումարների համար, որոնք այն ստանում է որպես միջնորդ:

2.3. Անձի դասակարգումը որպես կազմակերպություն իրականացվում է համաձայն ԱՄՆ դաշնային հարկային օրենսդրության: Այսպիսով, օրինակ, եթե մի կազմակերպություն չի դիտարկվում որպես կազմակերպություն իր ստեղծման երկրում, սույն կանոնների իմաստով կդիտարկվի որպես կազմակերպություն, եթե այն կազմակերպություն է ԱՄՆ դաշնային հարկային օրենսդրության իմաստով:

2.4. Ընկերությունը կարող է վճարումը ստացող անձին վերաբերվել որպես որակավորված միջնորդ, պահող ընկերակցություն կամ պահող թրասթ, եթե ստացել է W-8IMY ձև, որը ցույց է տալիս, որ անձը, որը ստանում է վճարումը որակավորված միջնորդ, պահող ընկերակցություն կամ պահող թրասթ է և պարունակում է անձի միջնորդի գլոբալ նույնականացման համարը՝ ՕՖՀ-ի դեպքում, կամ գործատուի նույնականացման համարը, եթե անձը ՕՖՀ չէ:

2.5. Ընկերությունը կարող է վերաբերվել վճարում ստացողին որպես այնպիսի անձ, որը ստանում է այնպիսի եկամուտ, որը արդյունավետորեն կապված է ԱՄՆ-ում առևտրի կամ բիզնեսի հետ կամ այնպիսի ակտիվի վաճառքի հետ, որը կարող է առաջացնել ԱՄՆ-ում առևտուր կամ բիզնես իրականացնելու հետ արդյունավետորեն կապված եկամուտ, եթե այն ստացել է W-8ECI ձև, կամ եթե կարող է կատարել դա կիրառելիվ ենթադրության կանոնները:

### **3. Վճարումը պահման հավաստագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի հետ վստահելիորեն կապակցելու կանոնները:**

3.1. *Ընդհանուր պահանջը:* Ընկերությունը կարող է վստահելիորեն կապակցել պահվող վճարումը փաստաթղթավորման հետ, եթե նախքան վճարումը ձեռք է բերել (ուղղակիորեն կամ գործակալի միջոցով) վավեր փաստաթղթեր, որոնք համապատասխանում են վճարում ստացողի կարգավիճակին, կարող է վստահորեն որոշել, թե վճարման ինչքան մասն է վերաբերում վավեր փաստաթղթերին և չգիտի կամ պատճառ չունի կասկածելու, որ փաստաթղթերում ներառված կամ դրանց հետ կապված որևէ տեղեկություն, հավաստագիր կամ քաղվածք չի համապատասխանում իրականությանը կամ վստահելի չէ: Ընկերությունը կարող է վճարում ստացողից փաստաթղթեր պահանջելու փոխարեն հիմնվել ենթադրության կանոնների վրա:

3.2. *Պահանջներ գրավոր հայտարարությունների համար:* Գրավոր հայտարարությունը վճարում ստացողի կամ գումարը ստացող այլ անձի կողմից ներկայացված հայտարարություն է, որը ներկայացնում է անձի կարգավիճակը և ցանկացած այլ տեղեկություն, որը հիմնավոր կերպով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը կատարի վճարման գծով իր պարտականությունները: Գրավոր հայտարարությունը վավեր է եթե այն պարունակում է անձի անունը, անձի հասցեն, հավաստիացումներ, որոնք վերաբերում են անձի կարգավիճակին, ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը պահանջվում է կապված կոնկրետ կարգավիճակի հետ (օրինակ՝ ԳՄՆՀ) և հավաստիացում, որ ձևում ներկայացված տեղեկությունը ճիշտ է և այն

իրավիճակներում, որոնք ձևը դարձնում են սխալ, կթարմացվի փոփոխությունից հետո 30 օրվա ընթացքում: Գրավոր հայտարարությունը կարող է ներկայացվել Ընկերության համար ընդունելի ցանկացած ձևով, ներառյալ որպես հաշվի բացման փաստաթղթերի մաս:

3.3. *Պահանջներ փաստաթղթային ապացույցի նկատմամբ:* Վճարում ստացողի մասով փաստաթղթային ապացույցը վստահելի է, եթե այն պարունակում է վճարում ստացողի կողմից հայցվող կարգավիճակը հավաստող բավարար տեղեկություններ:

3.3.1. *Ոչ ԱՄՆ անձի կարգավիճակի հստակումը:* Ընդունելի փաստաթղթային ապացույցը, որը հիմնավորում է ոչ ԱՄՆ անձի կարգավիճակի հայցը, ներառում է փաստաթղթերի հետևյալ տեսակները, եթե դրանք պարունակում են նշված անձի մշտական ռեզիդենտության հասցեն (կամ մատնանշում են այն երկիրը, որում ֆիզիկական անձը ռեզիդենտ կամ քաղաքացի է կամ այն երկիրը, որում իրավաբանական անձը ունի մշտական ռեզիդենտություն կամ որում ստեղծվել կամ կազմակերպվել է, եթե Ընկերությունը այլ կերպ ձեռք է բերել անձի մշտական ռեզիդենտության հասցեն):

3.3.1.1. Ռեզիդենտության հավաստագիր, որը տրվել է այն երկրի համապատասխան հարկային մարմնի կողմից, որի ռեզիդենտության հայտ վճարում ստացողը ներկայացնում է և որը նշում է, որ վճարում ստացողը իր վերջին հարկային հաշվետվությունը ներկայացրել է որպես այդ երկրի ռեզիդենտ,

3.3.1.2. Ֆիզիկական անձի համար ցանկացած վավեր նույնականացնող փաստաթուղթ, որը տրվել է իրավասու պետական մարմնի կողմից (օրինակ՝ կառավարություն կամ դրա որևէ գործակալություն կամ քաղաքապետարան) և սովորաբար օգտագործվում է նույնականացման նպատակներով,

3.3.1.3. Իրավաբանական անձի համար ցանկացած պաշտոնական փաստաթուղթ, որը տրվել է իրավասու պետական մարմնի կողմից (օրինակ՝ կառավարության կամ դրա գործակալության կամ քաղաքապետարանի),

3.3.2. *ՕՀՀՀՕ կարգավիճակի հստակումը:* Ընդունելի փաստաթղթային ապացույցը, որը հիմնավորում է իրավաբանական անձի ՕՀՀՀՕ կարգավիճակի հայտը ներառում է.

3.3.2.1. Մասնակցող ՕՖՀ կամ գրանցված համապատասխանող համարվող ՕՖՀ չհանդիսացող անձի համար ցանկացած կազմակերպական փաստաթուղթ (ինչպիսին է հիմնադիր պայմանագիրը կամ հավատարմագրային կառավարման պայմանագիրը), ֆինանսական հաշվետվություն, երրորդ անձի վարկային հաշվետվություն, նամակ կառավարական գործակալությունից կամ կառավարության վեբ կայքից, գործակալությունից կամ գրանցողից ստացված քաղվածք:

3.3.2.2. Նախապես առկա հաշվի մասով վճարում ստացողի ցանկացած ստանդարտացված արդյունաբերական կող կամ Ընկերության գրառումներում կատարված ցանկացած դասակարգում, որը կատարվել է հիմնվելով վճարում ստացողի (կամ գումարը ստացող այլ անձի) կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա և որը Ընկերության կողմից գրանցվել է 2012թ-ի հունվարի 1- դրությամբ, և պայմանով, որ առկա չէ վճարում ստացողի հետ կապված ԱՄՆ հայտանիշ, որի համար ձեռք չեն բերվել համապատասխան փաստաթղթեր:

3.4. Պահման հավաստագրերի, գրավոր հայտարարությունների և փաստաթղթային ապացույցի վավերականության ժամկետը:

3.4.1. *Ընդհանուր կանոնը:* Բացառությամբ, երբ այլ բան է սահմանված սույն կանոններով, պահման հավաստագիրը և գրավոր հայտարարությունը ուժի մեջ են մինչև պահման հավաստագրի կամ գրավոր հայտարարության ստորագրման տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարվա վերջին օրը: Փաստաթղթային ապացույցը ընդհանուր դեպքում վավեր է մինչև Ընկերությանը փաստաթղթային ապացույցի ներկայացման տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարվա վերջին օրը: Այնուամենայնիվ այն փաստաթղթային ապացույցը, որը պարունակում է վավերականության ժամկետ, կարող է համարվել վավեր մինչև այդ վավերականության ժամկետի ավարտը: Անկախ սույն կանոններով սահմանված վավերականության ժամկետներից, պահման հավաստագիրը, գրավոր հայտարարությունը և փաստաթղթային ապացույցը կդադարեն վավեր լինել, եթե Ընկերությունը տեղեկություն ունի հանգամանքների այնպիսի փոփոխության մասին, որոնք փաստաթղթերում ներառված տեղեկությունները դարձնում են ոչ ճիշտ: Այդ պատճառով Ընկերությունը պետք է ներդնի գործընթացներ, որպեսզի հավաստիանա, որ հաճախորդի հիմնական ֆայլերում ցանկացած փոփոխություն, որը հանգում է հանգամանքների փոփոխության, կթարմացվի Ընկերության կողմից, ինչպես նաև, Ընկերությունը պետք է տեղեկացնի փաստաթուղթ ներկայացնող ցանկացած անձի հանգամանքների փոփոխման մասին Ընկերությանը տեղեկացնելու պարտականության մասին:

3.4.2. *Անորոշ վավերականություն:* Անկախ նախորդ կետից, հետևյալ հավաստագրերը (կամ հավաստագրերի հատվածները), գրավոր հայտարարությունները կամ փաստաթղթային ապացույցները կմնան վավեր այնքան ժամանակ, քանի դեռ Ընկերությունը չունի տեղեկություններ հանգամանքների այնպիսի փոփոխության մասին, որը փաստաթղթերի տեղեկությունները դարձնում է սխալ:

3.4.2.1. Պահման հավաստագիր կամ գրավոր հայտարարություն, որը ներկայացվել է մասնակցող ՕՖՀ-ի կամ գրանցված համապատասխանող համարվող ՕՖՀ-ի կողմից, որը ներառում է վավեր ԳՄՆՀ, որը ստուգվել է Ընկերության կողմից սույն կանոններում ներկայացված եղանակով,

3.4.2.2. Միջնորդի, միջանցիկ կազմակերպության կամ ԱՄՆ մասնաճյուղի պահման հավաստագիր,

3.4.2.3. Պահման հավաստագիր, գրավոր հայտարարություն կամ փաստաթղթային ապացույց՝ ներկայացված արտասամերիկյան կառավարության, ԱՄՆ տարածքի կառավարության, արտասամերիկյան կենտրոնական բանկի (ներառյալ միջազգային հաշվարկների բանկը) միջազգային կազմակերպության կամ ցանկացած այդպիսի անձին ամբողջովին պատկանող կազմակերպության կողմից,

3.4.2.4. Փաստաթղթային ապացույց, որը հիմնականում չի նորացվում կամ փոփոխվում (ինչպիսին է գրանցման վկայականը):

3.4.2.5. Պահման հավաստագիր կամ փաստաթղթային ապացույց, որը ներկայացվել է ոչ ԱՄՆ անձի կարգավիճակի հայտ ներկայացնող ֆիզիկական անձի կողմից. եթե Ընկերությունը վճարում ստացողի համար չունի ընթացիկ ռեզիդենտության կամ փոստային ԱՄՆ հասցե և

չունի մեկ կամ մի քանի ընթացիկ ԱՄՆ հեռախոսի համարներ, որոնք միակ հեռախոսի համարներն են, որ Ընկերությունը ունի վճարում ստացողի համար, ինչպես նաև չի ստացել պարտավորության գծով ԱՄՆ-ում վճարում կատարելու գործող հանձնարարականներ,

3.4.2.6. Պահման հաստագիր, գրավոր հայտարարություն կամ փաստաթղթային ապացույց, որը ներկայացվել է ստորև նշված կազմակերպություններից մեկի կողմից, եթե այդ կազմակերպությունը վճարում ստացողն է.

3.4.2.6.1. կենսաթոշակային ֆոնդ կամ նման ֆոնդին ամբողջովին պատկանող կազմակերպություն,

3.4.2.6.2. բացառություն կազմող ոչ ֆինանսական խումբ,

3.4.2.6.3. շահույթ չհետապնդող կազմակերպություն,

3.4.2.6.4. ՄԿՀ-ի (IGA) ոչ հաշվետու ՕՖՀ,

3.4.2.6.5. ԱՄՆ տարածքի ֆինանսական հաստատություն, որը համաձայն է դիտարկվել որպես ԱՄՆ անձ,

3.4.2.6.6. ՈՖՕԿ, որի բաժնետոմսը կանոնավոր կերպով շրջանառվում են,

3.4.2.6.7. 2.4.2.6.6. կետում նշված ՈՖՕԿ-ի հետ փոխկապակցված անձ,

3.4.2.6.8. Ակտիվ ՈՖՕԿ, որի վերաբերյալ Ընկերությունը իր ՓԼԱՖ կանխարգելման գործընթացի միջոցով բացահայտել է, որ ներառված է ֆինանսական հաստատության գործունեությունից տարբերվող գործունեության մեջ և ՓԼԱՖ կանխարգելման նպատակով հաշվի ընթացիկ դիտարկումը ցույց չի տալիս, որ այդ բացահայտումը սխալ է,

3.4.2.6.9. հովանավորվող ՕՖՀ,

*3.4.3. Հանգամանքների փոփոխություն.*

3.4.3.1. Համարվում է, որ անձի մոտ առկա է հանգամանքների փոփոխություն միայն եթե այդ փոփոխությունը կազդի անձի ՕՀՀՀՕ կարգավիճակի վրա: Հասցեի կամ հեռախոսի համարի փոփոխությունը հանգամանքների փոփոխություն է, միայն եթե այն փոխվում է ԱՄՆ հեռախոսի համարի կամ հասցեի:

3.4.3.2. Եթե հանգամանքների փոփոխությունը հավաստագրում կամ այլ փաստաթղթում ներառված որևէ տեղեկությունը դարձնում է սխալ, ապա այն անձը, որի անունը նշված է հավաստագրի վրա կամ այլ փաստաթղթերում, պետք է տեղեկացնի Ընկերությանը փոփոխությունից հետո 30 օրվա ընթացքում և ներկայացնի նոր հավաստագիր, նոր գրավոր հայտարարություն կամ նոր փաստաթղթային ապացույց:

3.4.3.3. Հավաստագիրը կամ այլ փաստաթուղթը դառնում է անվավեր այն ամսաթվի դրությամբ, երբ Ընկերությունը իմանում է կամ պատճառ է ունենում կասկածելու, որ հավաստագրի կամ փաստաթղթի ճշտության վրա ազդող հանգամանքները փոխվել են: Այնուամենայնիվ, Ընկերությունը վերաբերվում է անձին որպես մինչև հանգամանքների փոփոխությունը ունեցած կարգավիճակը ունեցող անձ մինչև հանգամանքների փոփոխության հետևանքով հավաստագրի կամ փաստաթղթի անվավեր դառնալու պահին հաջորդող 90-րդ օրվանից և նոր հավաստագիր կամ նոր փաստաթուղթ ներկայացվելու օրվանից առավել վաղը:

## **4. Կարգավիճակի որոշման համար փաստաթղթային պահանջները**

4.1. ԱՄՆ անձի նույնացումը:

4.1.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը պետք է վճարում ստացողին դիտարկի որպես ԱՄՆ անձ, եթե այն վճարում ստացողից ստացել է վավեր W-9 ձև կամ եթե այն կարող է ենթադրել, որ վճարում ստացողը ԱՄՆ անձ է, ելնելով սույն կանոններում ներառված ենթադրության կանոններից: Ընկերությունը պետք է համարի, որ W-9 ձև ներկայացրած վճարում ստացողը որոշակի ԱՄՆ անձ է, եթե W-9 ձևը չի պարունակում հավաստիացումներ, որ վճարում ստացողը որոշակի ԱՄՆ անձ չէ: Անկախ վերոգրյալից՝ եթե Ընկերությունը ստանում է W-9 ձևը, որը ցույց է տալիս, որ վճարում ստացողը որոշակի ԱՄՆ անձ չէ, պետք է վճարում ստացողին վերաբերվի որպես որոշակի ԱՄՆ անձ, եթե գիտի կամ պատճառ ունի իմանալու որ վճարում ստացողի այն հայցը, ըստ որի ինքը որոշակի ԱՄՆ անձ չէ, սխալ է:

4.1.2. *Փաստաթղթային ապացույցի վրա հիմնվելը:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես որոշակի ԱՄՆ անձից տարբերվող ԱՄՆ անձ, եթե ունի փաստաթղթային ապացույց որը հիմնավորում է, որ վճարում ստացողը ԱՄՆ անձ է, սակայն որոշակի ԱՄՆ անձ չէ:

4.2. Ոչ ԱՄՆ ֆիզիկական անձանց նույնացումը: Ընկերությունը կարող է վճարում ստացողին դիտարկել որպես ոչ ԱՄՆ ֆիզիկական անձ, եթե այն ձեռք է բերում փաստաթղթային ապացույց, որը հաստատում է անձի համապատասխան կարգավիճակը կամ եթե ենթադրվում է, որ վճարում ստացողը ոչ ԱՄՆ ֆիզիկական անձ է՝ ելնելով ենթադրությունների կանոններից:

4.3. Մասնակցող ՕՖՀ-ի և գրանցված համապատասխանող համարվող ՕՖՀ-ի նույնականացումը: Ընկերությունը կարող է վերաբերվել վճարում ստացողին որպես մասնակցող ՕՖՀ կամ գրանցված համապատասխան համարվող ՕՖՀ, եթե վճարում ստացողը ներկայացնում է իր ԳՄՆՀ-ն և նշում է, թե ինքը մասնակցող ՕՖՀ է, թե գրանցված համապատասխանող համարվող ՕՖՀ և Ընկերությունը ստուգել է ԳՄՆՀ-ն ՆԵԾ-ի հրապարակած ՕՖՀ-ների ցուցակով:

4.4. Հավաստագրված համապատասխանող համարվող ՕՖՀ-ների նույնացումը: Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես հավաստագրված համապատասխան համարվող ՕՖՀ, եթե ունի պահման հավաստագիր, որը նույնացնում է վճարում ստացողին որպես հավաստագրված համապատասխան համարվող ՕՖՀ և պահման հավաստագիրը պարունակում է վճարում ստացողի հավաստիացումը, որ այն բավարարում է այն պահանջներին, որոնք անհրաժեշտ են, որպեսզի վճարում ստացողը որակվի որպես հավաստագրված համապատասխան համարվող ՕՖՀ:

4.5. Չմասնակցող ՕՖՀ-ի նույնականացումը: Ընկերությունը պետք է վճարում ստացողին վերաբերվի որպես չմասնակցող ՕՖՀ, եթե ունի պահման հավաստագիր, որը վճարում ստացողին նույնականացնում է որպես չմասնակցող ՕՖՀ, Ընկերությունը գիտի կամ պատճառ ունի կարծելու, որ վճարում ստացողը չմասնակցող ՕՖՀ է կամ Ընկերությունից պահանջվում է վճարում ստացողին վերաբերվել որպես չմասնակցող ՕՖՀ ենթադրության կանոնների համաձայն:

4.6. Բացառություն կազմող իրական շահառուի նույնականացումը:

4.6.1. Արտասամերիկյան կառավարությունների, ԱՄՆ տարածքների կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկերի նույնականացումը:

4.6.1.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին դիտարկել որպես արտասամերիկյան կառավարություն, ԱՄՆ տարածքի կառավարություն, միջազգային կազմակերպություն կամ արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկ, եթե վճարում ստացողը ներկայացնում է գրավոր հայտարարություն այն մասին, որ ինքը նման կազմակերպություն է և գրավոր հայտարարությունը ցույց է տալիս, որ վճարում ստացողը վճարումը ստանում է որպես իրական շահառու: Արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկի կողմից ներկայացված գրավոր հայտարարությունը պետք է նաև նշի, որ արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկը վճարումը չի ստանում կապված առևտրային գործունեության հետ:

4.6.1.2. *Բացառություն նախօրոք առկա պարտավորության համար:* Եթե Ընկերությունը վճարում է կատարում նախօրոք առկա պարտավորության գծով, կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես արտասամերիկյան կառավարություն, ԱՄՆ տարածքի կառավարություն, միջազգային կազմակերպություն կամ արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկ, եթե.

4.6.1.2.1. Վճարում ստացողին Ընկերությունը ճանաչում է որպես այդպիսին, վճարում ստացողի անունը և վճարմանը շրջապատող փաստերը վստահելիորեն մատնանշում են կամ Ընկերությունը ունի նախօրոք առկա հաշվի փաստաթղթային ապացույց, որը վստահելիորեն մատնանշում է, որ վճարում ստացողը արտասամերիկյան կառավարություն է կամ ԱՄՆ տարածքի կառավարություն, արտասամերիկյան կառավարության կամ ԱՄՆ տարածքի կառավարության քաղաքական ստորաբաժանում, վերոնշյալներից մեկին կամ մի քանիսին ամբողջովին պատկանող որևէ գործակալություն կամ գործիքակազմ, միջազգային կազմակերպություն, արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկ կամ միջազգային հաշվարկների բանկ

4.6.1.2.2. Ընկերությունը չունի տեղեկություն, որ վճարում ստացողը իրական շահառուն չէ կամ որ արտասամերիկյան թողարկող կենտրոնական բանկը ստանում է վճարումը առևտրային գործունեության կապակցությամբ:

4.6.2. Կենսաթոշակային ֆոնդերի նույնականացումը:

4.6.2.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես կենսաթոշակային ֆոնդ, եթե այն ձեռք է բերում գրավոր հայտարարություն, որում վճարում ստացողը հավաստիացնում է, որ ինքը իր տարածքի օրենքի համաձայն կենսաթոշակային ֆոնդ է: Ընկերությունը կարող է նաև դիտարկել, որ վճարումը կատարվում է կենսաթոշակային ֆոնդի, եթե այն ձեռք է բերում փաստաթղթային ապացույց, որը Ընկերությանը ապահովում է վճարում ստացողին որպես կենսաթոշակային ֆոնդ դիտարկելու համար բավարար տեղեկություններով:

4.6.2.2. *Բացառություն նախօրոք առկա պարտավորությունների համար:* Եթե Ընկերությունը կատարում է վճարում նախօրոք առկա պարտավորության գծով, այն կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես կենսաթոշակային ֆոնդ, եթե ունի փաստաթղթային ապացույց, որը հաստատում է, որ վճարում ստացողը օտարերկրյա կազմակերպություն է, որը այն երկրում, որում կազմակերպվել է, որակվում է որպես կենսաթոշակային ֆոնդ:

4.6.3. բացառություն կազմող ՈՖՕԿ-ների նույնականացումը



4.6.3.1. բացառություն կազմող ոչ ֆինանսական խմբի անդամ կազմակերպությունների նույնականացումը:

4.6.3.1.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես բացառություն կազմող ոչ ֆինանսական խմբի կազմակերպություն, եթե ձեռք է բերում.

4.6.3.1.1.1. գրավոր հայտարարություն, որում վճարում ստացողը հավաստիացնում է, որ ինքը արտասամերիկյան կազմակերպություն է, որը անմիջականորեն գործում է որպես բացառություն կազմող ոչ ֆինանսական խմբի կազմակերպություն այնպիսի խմբում, որը անմիջականորեն ներգրավված է ֆինանսական բիզնեսից տարբերվող բիզնեսում, կամ

4.6.3.1.1.2. Փաստաթղթային ապացույց, որը Ընկերությանը ապահովում է բավարար տեղեկություններով, որպեսզի հավաստիանա, որ վճարում ստացողը բացառություն կազմող ոչ ֆինանսական խմբի կազմակերպություն է:

4.6.4. Բացառություն կազմող ոչ ֆինանսական նոր ստեղծված ընկերությունների նույնականացումը:

4.6.4.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես բացառություն կազմող ոչ ֆինանսական նոր ստեղծված կազմակերպություն, եթե ձեռք է բերում.

4.6.4.1.1. Գրավոր հայտարարություն վճարում ստացողից, որում վճարում ստացողը հավաստում է, որ այն արտասամերիկյան կազմակերպություն է, որը ստեղծվել է ֆինանսական ինստիտուտի գործունեությունից տարբերվող գործունեություն իրականացնելու նպատակով և ներկայացնում է կազմակերպության ստեղծման ամսաթիվը, որը վճարման ամսաթվից ոչ ավել քան 24 ամիս առաջ է, կամ.

4.6.4.1.2. Փաստաթղթային ապացույց, որը Ընկերությանը ապահովում է բավարար տեղեկությամբ, հիմնավորելու համար, որ վճարում ստացողը ֆինանսական ինստիտուտից տարբերվող արտասամերիկյան կազմակերպություն է և ստեղծվել է վճարման ամսաթվից ոչ ավել քան 24 ամիս առաջ:

4.6.5. Լուծարման կամ սնանկության մեջ գտնվող բացառություն կազմող ոչ ֆինանսական կազմակերպությունների նույնականացումը:

4.6.5.1. *ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես լուծարման կամ սնանկության գործընթացում գտնվող բացառություն կազմող ոչ ֆինանսական կազմակերպություն, եթե ունի փաստաթղթային ապացույց, որը հիմնավորում է, որ վճարում ստացողը լուծարման կամ սնանկության գործընթացում գտնվող արտասամերիկյան կազմակերպություն է և հիմնավորում է, որ մինչև լուծարման կամ սնանկության գործընթացը վճարում ստացողը ներգրավված էր ֆինանսական ինստիտուտի գործունեությունից տարբերվող գործունեության մեջ: Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես բացառություն կազմող ոչ ֆինանսական կազմակերպություն, որը գտնվում է լուծարման կամ սնանկության գործընթացում, եթե ձեռք է բերում գրավոր հայտարարություն, որը հավաստում է, որ վճարում ստացողը արտասամերիկյան կազմակերպություն է, որը գտնվում է լուծարման կամ վերակազմակերպման գործընթացում իր նախկին բիզնեսը որպես ոչ ֆինանսական կազմակերպություն շարունակելու կամ վերսկսելու նպատակով, և Ընկերությունը տեղեկություն չունի, որ վճարում ստացողը նման կազմակերպություն լինելու հայտ է

ներկայացրել երեք տարուց ավելի (քանի դեռ Ընկերությունը ձեռք չի բերել լրացուցիչ փաստաթղթային ապացույց, որը կհիմնավորի այն հանգամանքը, որ կազմակերպությունը դեռ մնում է լուծարման կամ սնանկացման գործընթացում):

4.6.5.2. *Բացառություն նախօրոք առկա հաշիվների համար:* Եթե ընկերությունը վճարում է կատարում նախօրոք առկա պարտավորության մասով, կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես բացառություն կազմող ոչ ֆինանսական կազմակերպություն, որը գտնվում է լուծարման կամ սնանկության գործընթացում, եթե ունի փաստաթղթային ապացույց, որը անվերապահորեն ցույց է տալիս, որ վճարում ստացողը ֆինանսական կազմակերպություն չէ և արտասամերիկյան կազմակերպություն է, որը մտել է լուծարման կամ սնանկության գործընթացի մեջ վճարմանը նախորդող երեք տարիների ընթացքում:

4.6.6. Ակտիվ ՈՖՕԿ-երի նույնականացումը:

4.6.6.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես ակտիվ ՈՖՕԿ, եթե այն ունի

4.6.6.1.1. Փաստաթղթային ապացույց, որը ներկայացնում է բավարար տեղեկություն, որոշելու համար, որ վճարում ստացողը արտասամերիկյան կազմակերպություն է, որը ներգրավված է ակտիվ առևտրում կամ ֆինանսական ինստիտուտի գործունեությունից տարբերվող գործունեությունում, կամ.

4.6.6.1.2. Գրավոր հայտարարություն, որը նշում է, որ վճարում ստացողը արտասամերիկյան կազմակերպություն է, որը ներգրավված է ֆինանսական ինստիտուտի գործունեությունից տարբերվող ակտիվ գործունեությունում:

4.6.6.2. *Բացառություն նախօրոք առկա պարտավորության համար:* Եթե Ընկերությունը վճարում է կատարում նախօրոք առկա պարտավորության գծով, կարող է վճարում ստացողին վերաբերվել որպես ակտիվ ՈՖՕԿ, եթե ունի փաստաթղթային ապացույց, որը անառարկելիորեն ցույց է տալիս, որ վճարում ստացողը օտարերկրյա կազմակերպություն է, որը ներգրավված է առևտրում կամ ֆինանսական ինստիտուտի գործունեությունից տարբերվող բիզնեսում:

4.6.7. Պասիվ ՈՖՕԿ-ների նույնականացումը:

4.6.7.1. *Ընդհանուր դեպքում:* Ընկերությունը կարող է վճարմանը վերաբերվել որպես պասիվ ՈՖՕԿ-ին կատարված վճարում, եթե այն ունի

4.6.7.1.1. Փաստաթղթային ապացույց, որը ապահովում է բավարար տեղեկատվություն, որոշելու համար, որ վճարում ստացողը արտասամերիկյան ոչ ֆինանսական կազմակերպություն է,

4.6.7.1.2. Գրավոր հայտարարություն, որ վճարում ստացողը արտասամերիկյան ոչ ֆինանսական կազմակերպություն է:

4.6.7.2. *Հատուկ կանոն նախօրոք առկա պարտավորությունների համար:* Եթե Ընկերությունը վճարում է կատարում նախօրոք առկա պարտավորության դիմաց, կարող է վճարում ստացողին դիտարկել որպես պասիվ ՈՖՕԿ, եթե ունի փաստաթղթային ապացույց, որը ապահովում է բավարար տեղեկատվություն, որոշելու համար, որ վճարում ստացողը արտասամերիկյան ոչ ֆինանսական կազմակերպություն է:

4.6.7.3. *Պահանջվող սեփականատիրոջ հավաստագիրը պասիվ ՈՖՕԿ-ների համար:*

4.6.7.3.1. *Ընդհանուր դեպքում:* Պասիվ ՈՖՕԿ-ն պետք է Ընկերությանը ներկայացնի կամ գրավոր հավաստիացում (ներառված կամ պահման հավաստագրում կամ գրավոր հայտարարությունում), որ այն չունի նշանակալից ԱՄՆ սեփականատերեր կամ յուրաքանչյուր նշանակալից ԱՄՆ սեփականատիրոջ անունը, հասցեն և ՀՎՆՀ:

4.6.7.3.2. *Բացառություն նախօրոք առկա պարտավորությունների համար, որոնք փոքր փն կամ հավասար \$1000000-ին:* Եթե Ընկերությունը մինչև 2017թ-ի հունվարի 1-ը վճարում է կատարում նախօրոք առկա պարտավորության դիմաց, որի արժեքը 2014թ-ի հունիսի 30-ի և 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չի գերազանցում \$1000000, կարող է վճարում ստացողի նշանակալից սեփականատերերին որոշելու համար հավաստագրերի և տեղեկությունների ձեռքբերման փոխարեն հիմնվել իր ՓԼԱՖ կանխարգելման պատշաճ իրավական գործընթացի նպատակով իրականացված դիտարկման վրա, եթե նույնականացրել է յուրաքանչյուր վերահսկող անձի ռեզիդենտությունը:

## **5. Նույնականացման և փաստաթղթավորման գործընթացը իրավաբանական անձանց համար:**

5.1. Իրավաբանական անձին պատկանող հաշվի կապակցությամբ, Ընկերությունը պետք է որոշի, թե արդոք հաշիվը ԱՄՆ հաշիվ է, չարձագանքող հաշվետիրոջը պատկանող հաշիվ կամ չմասնակցող ՕՖՀ-ի պատկանող հաշիվ, անկախ նրանից՝ Ընկերությունը այդ հաշվին վճարում կատարում է, թե ոչ: Եթե գումարը ստացող հաշվետերը վճարում ստացողը չէ, Ընկերությունը պետք է նաև որոշի վերջնական վճարում ստացողի կամ ստացողների ՕՀՀՀՕ կարգավիճակը:

5.2. Այն հաշվետերերի նախապես առկա հաշիվների համար, որոնք արտաքնապես ՕՖՀ են, Ընկերությունը պետք է իրականացնի անհրաժեշտ նույնականացման և փաստաթղթավորման գործընթացները իր սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում: Մնացած բոլոր հաշվետերերի նախապես առկա հաշիվների համար Ընկերությունը պետք է իրականացնի անհրաժեշտ նույնականացման և փաստաթղթավորման գործընթացները իր ՕՖՀ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում: Այն հաշիվների համար, որոնք նախապես առկա հաշիվներ չեն, Ընկերությունը պետք է անհրաժեշտ նույնականացման և փաստաթղթավորման գործընթացներն իրականացնի այդ հաշվով պահվող վճարման կամ օտարերկրյա միջանցիկ վճարման կատարման ամսաթվից և Ընկերության կողմից հաշվի բացման պահին հաջորդող 90-րդ օրվանից առավել վաղի դրությամբ:

5.3. Բացառություն իրավաբանական անձանց պատկանող որոշակի նախապես առկա հաշիվների համար:

5.3.1. Ընկերությունից չի պահանջվում իրականացնել նույնականացման և փաստաթղթավորման գործընթացը իրավաբանական անձանց այն նախապես առկա հաշիվների նկատմամբ, որոնց համախմբված մնացորդը կամ արժեքը փոքր է կամ հավասար \$ 250000: Սույն բացառությունը կիրառելու նպատակով հաշվի մնացորդը պետք է որոշվի ՕՖՀ պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ: Սույն բացառությանը համապատասխանող հաշիվը կդադարի համապատասխանել սույն բացառությանը այն օրացուցային տարվա վերջում, որում հաշվի մնացորդը կամ արժեքը կգերազանցի \$1000000-

ը, կամ այն ամսաթվի դրությամբ, երբ տեղի կունենա այդ հաշվի կամ դրա հետ կապակցված այլ հաշվի հետ կապված հանգամանքների փոփոխություն:

5.3.2. Սույն բացառությունը կիրառելիս իրավաբանական անձի հաշիվների համախմբված մնացորդը կամ արժեքը որոշելու նպատակով Ընկերությունից պահանջվում է համախմբել նույն հաշվետիրոջը պատկանող (ամբողջությամբ կամ մասամբ) բոլոր հաշիվների մնացորդները կամ արժեքները:

## **6. Նույնականացման և փաստաթղթավորման գործընթացը ֆիզիկական անձանց համար:**

6.1. Ֆիզիկական անձի հաշվի համար, որը նախապես առկա հաշիվ չէ, Ընկերությունը պետք է որոշի արդյոք հաշիվը ԱՄՆ հաշիվ է թե ոչ ԱՄՆ հաշիվ:

6.2. Ֆիզիկական անձի հաշիվների նույնականացման և փաստաթղթավորման պահանջը Նախապես առկա հաշիվների համար:

6.2.1. Ֆիզիկական անձի նախապես առկա հաշվի առումով, Ընկերությունը պետք է որոշի, թե հաշիվը ԱՄՆ հաշիվ է, ոչ ԱՄՆ հաշիվ է, թե չենթարկվող հաշվետիրոջ հաշիվ է: Ընկերությունը նախ պետք է որոշի, առկա է արդյոք հաշվի հետ կապված որևէ ԱՄՆ հայտանիշ, այնուհետև, եթե առկա է հաշվի հետ կապված ԱՄՆ հայտանիշ, հաշվետիրոջ կարգավիճակը հաստատելու համար հավաքագրի համապատասխան փաստաթղթերը: Այս նպատակով ենթադրության կանոնները չեն կիրառվում: Ընկերությունը պետք է ավարտի յուրաքանչյուր հաշվի մասով անհրաժեշտ նույնականացման և փաստաթղթավորման գործընթացները իր ՕՖՀ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում, կամ, դա անել չկարողանալու դեպքում, պետք է այդ հաշվին վերաբերվի որպես չենթարկվող հաշվետիրոջը պատկանող հաշիվ: Ընկերությունը կարող է շարունակել ԱՄՆ հայտանիշ չունեցող հաշվին վերաբերվել որպես ոչ ԱՄՆ հաշիվ, քանի դեռ առկա չեն հաշվի հետ կապված հանգամանքների փոփոխություններ:

6.2.2. Բացառություններ որոշակի ցածրարժեք նախապես առկա անհատի հաշիվների համար:

6.2.2.1. Ընկերությունից չի պահանջվում իրականացնել անհրաժեշտ նույնականացման և փաստաթղթավորման գործընթացները նախապես առկա այն հաշիվների նկատմամբ, որոնց համախմբված մնացորդը կամ արժեքը փոքր կամ հավասար է \$50000-ի: Այս բացառությունը կիրառելու նպատակով հաշվի մնացորդը պետք է որոշվի ՕՖՀ պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ և պետք է կիրառվեն համախմբման կանոնները: Հաշիվը, որը բավարարում է այս բացառությանը, կդադարի բավարարել դրան յուրաքանչյուր այնպիսի համապատասխան օրացուցային տարվա ավարտին, որում հաշվի մնացորդը կամ արժեքը կգերազանցի \$1000000-ը, կամ այն պահից, երբ տեղի կունենա հաշվին կամ դրա հետ կապակցված որևէ այլ հաշվին վերաբերող հանգամանքների փոփոխություն:

6.2.2.2. Նախապես առկա հաշվի համախմբված մնացորդը կամ արժեքը որոշելու նպատակով Ընկերությունը պետք է համախմբի տվյալ անձի բոլոր հաշիվների մնացորդները և արժեքները:

6.2.3. Նույնականացման և փաստաթղթավորման յուրահատուկ գործընթացներ ֆիզիկական անձի նախապես առկա հաշիվների համար:

6.2.3.1. Ընկերությունը պետք է ուսումնասիրի ֆիզիկական անձանց նախապես առկա հաշիվները (կիրառելով էլեկտրոնային որոնում, իսկ բարձրարժեք հաշիվների համար, ընդլայնված ուսումնասիրություն), որպեսզի որոշի առկա են արդյոք հաշվի հետ կապված ԱՄՆ հայտանիշներ: Եթե հաշվի հետ կապված ոչ մի ԱՄՆ հայտանիշ չի բացահայտվում, Ընկերությունը կարող է վերաբերվել հաշվին որպես ոչ ԱՄՆ հաշիվ: Եթե հաշվի հետ կապված ԱՄՆ հայտանիշ է բացահայտվում, Ընկերությունը պետք է հավաքագրի համապատասխան փաստաթղթեր, որպեսզի հաստատի հաշվետիրոջ ոչ ԱՄՆ անձ լինելու հանգամանքը:

6.2.3.2. ԱՄՆ հայտանիշները և համապատասխան փաստաթղթավորման կանոնները:

6.2.3.2.1. Ընկերությունը պետք է ուսումնասիրի հաշվետիրոջ հաշվի տեղեկությունները հետևյալ ԱՄՆ հայտանիշներից յուրաքանչյուրի համար.

6.2.3.2.1.1. Հաշվետիրոջ ԱՄՆ քաղաքացի կամ ռեզիդենտ լինելու մասին նշում,

6.2.3.2.1.2. Ծննդավայր ԱՄՆ-ում,

6.2.3.2.1.3. Ընթացիկ ԱՄՆ ռեզիդենտության հասցե կամ ԱՄՆ փոստային հասցե (ներառյալ ԱՄՆ-ի փոստարկը),

6.2.3.2.1.4. Ընթացիկ ԱՄՆ հեռախոսահամար, անկախ այն բանից՝ այդ համարը հաշվետիրոջ հետ կապված միակ համարն է, թե ոչ,

6.2.3.2.1.5. Հաշվից ԱՄՆ-ում պահվող հաշվին վճարում կատարելու գործող հանձնարարականներ,

6.2.3.2.1.6. Ընթացիկ լիազորագիր կամ ստորագրելու իրավասություն՝ տրված ԱՄՆ հասցեով անձի,

6.2.3.2.1.7. Խնամարկալության հասցե կամ փոստի պահպանման հասցե, որը Ընկերությանը հաշվետիրոջ համար բացահայտած միակ հասցեն է:

6.2.3.2.2. Եթե հաշվետիրոջ հաշվի տեղեկատվության կապակցությամբ բացահայտվել են ԱՄՆ հայտանիշներ, Ընկերությունը պետք է պահպանի ստորև նշված փաստաթղթերը, որպեսզի հաստատի հաշվետիրոջ ոչ ԱՄՆ անձի կարգավիճակը: Եթե Ընկերությունը չի կարողանում հաստատել հաշվետիրոջ ոչ ԱՄՆ անձի կարգավիճակը հիմնվելով այդ փաստաթղթերի վրա, Ընկերությունը պետք է պահանջի W-9 ձև և, անհրաժեշտության դեպքում, վավեր և արդյունավետ հրաժարում, որպեսզի հաստատի, որ հաշիվը ԱՄՆ հաշիվ է, իսկ եթե ի վիճակի չէ այդպես անել, պետք է հաշվին վերաբերվի որպես չենթարկվող հաշվետիրոջը պատկանող հաշիվ:

6.2.3.2.2.1. *Հաշվետիրոջ՝ ԱՄՆ քաղաքացի կամ ռեզիդենտ լինելու մասին նշում:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը պարունակում է հաշվետիրոջ՝ ԱՄՆ քաղաքացի կամ ռեզիդենտ լինելու մասին նշում, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր և փաստաթղթային ապացույց, որոնք ակնհայտ են դարձնում ԱՄՆ-ից տարբերվող երկրի քաղաքացիությունը, որպեսզի հաստատի հաշվետիրոջ՝ ոչ ԱՄՆ անձի կարգավիճակը:

6.2.3.2.2.2. *ԱՄՆ-ում ծննդավայրի մասին միանշանակ վկայություն:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար միանշանակ ցույց է տալիս ԱՄՆ-ում ծննդավայր, Ընկերությունը հաշվետիրոջ ոչ ԱՄՆ անձի կարգավիճակը հաստատելու նպատակով պետք է վերցնի փաստաթղթային ապացույց, որը ակնհայտ է

դարձնում ԱՄՆ-ից տարբերվող երկրի քաղաքացիությունը և անհատի ԱՄՆ քաղաքացիությունը կորցնելու մասին հավաստագրի պատճենը կամ, որպես այլընտրանք, պահման հավաստագիր և փաստաթղթային ապացույց, որը ակնհայտ է դարձնում ԱՄՆ-ից տարբերվող երկրի քաղաքացիությունը և հաշվետիրոջ վստահելի գրավոր բացատրությունը ԱՄՆ քաղաքացիությունից հրաժարվելու վերաբերյալ կամ այն պատճառի վերաբերյալ, որի համաձայն հաշվետերը ձեռք չի բերել ԱՄՆ քաղաքացիություն:

6.2.3.2.2.3. *ԱՄՆ հասցե կամ ԱՄՆ փոստային հասցե:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար պարունակում է ԱՄՆ հասցե կամ ԱՄՆ փոստային հասցե, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր և փաստաթղթային ապացույց, որպեսզի հաստատի հաշվետիրոջ կարգավիճակը որպես ոչ ԱՄՆ անձ:

6.2.3.2.2.4. *Միայն ԱՄՆ հեռախոսահամարներ:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար պարունակում է մեկ կամ ավելի հեռախոսահամարներ ԱՄՆ-ում և ոչ մի այլ հեռախոսահամար, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր և փաստաթղթային ապացույց, որպեսզի հաստատի հաշվետիրոջ կարգավիճակը որպես ոչ ԱՄՆ անձ:

6.2.3.2.2.5. *ԱՄՆ հեռախոսահամարներ և ոչ ԱՄՆ հեռախոսահամարներ:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար պարունակում է մեկ կամ ավելի հեռախոսահամարներ ԱՄՆ-ում և առնվազն մեկ հեռախոսահամար ԱՄՆ-ից դուրս, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր և փաստաթղթային ապացույց, որպեսզի հաստատի հաշվետիրոջ կարգավիճակը որպես օտարերկրյա անձ:

6.2.3.2.2.6. *Գումարներ վճարելու գործող հանձնարարականներ:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար պարունակում է հաշվից ԱՄՆ-ում գտնվող հաշվին գումարներ վճարելու հանձնարարականներ, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր և նկարագրված փաստաթղթային ապացույց կամ գրավոր վստահելի բացատրություն, որը հաստատում է հաշվետիրոջ կարգավիճակը, որպես ոչ ԱՄՆ անձ:

6.2.3.2.2.7. *ԱՄՆ հասցեով, խնամարկության հասցեով կամ փոստի պահման հասցեով անձին տրված լիազորագիր կամ ստորագրելու իրավասություն:* Եթե հաշվի հետ կապված ուսումնասիրման ենթակա տեղեկատվությունը հաշվետիրոջ համար պարունակում է այնպիսի անձի տրված լիազորագիր կամ ստորագրելու իրավասություն, որը ունի ԱՄՆ հասցե կամ խնամարկության հասցե կամ փոստի պահպանման հասցե, որպես իր միակ հասցե, Ընկերությունը պետք է վերցնի պահման հավաստագիր կամ փաստաթղթային ապացույց, որպեսզի հաստատի հաշվետիրոջ կարգավիճակը, որպես ոչ ԱՄՆ անձ:

6.2.3.3. Ընկերությունը, պարզելու համար արդյոք առկա է հաշվի հետ կապված որևէ ԱՄՆ հայտանիշ, կարող է հիմնվել միայն հաշվի հետ կապված և իր մոտ պահպանվող էլեկտրոնային ձևով որոնելի տեղեկությունների ուսումնասիրման վրա:

## **7. Եզրափակիչ դրույթներ**

7.1. Սույն կանոններն ուժի մեջ է մտնում «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի աշխատակիցներին պատշաճ կարգով իրազեկելու պահից, ինչը պետք է իրականացվի «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ժողովի կողմից հաստատման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.2. Սույն կանոնների բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի ժողովի կողմից (եթե «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում 6.1. կետով սահմանված կարգով: